Արիստիդէս իմաստասէրը մարդկային կենաց երջանկութիւնը իրեն պէտք եղածը ունենալուն վրայ դրաւ, ըսելով որ իր կերակուրն ու հարկաւոր բաները չունեցողը՝ ալ աղէկ է որ գերեզման երթայ. վասն զի աշխարհքիս վրայ ան միայն երջանիկ կրնայ ըսուիլ, ով որ ուրիշի կարօտ չէ։

Հերակլիտոս իմաստասէրը մարդկային կենաց երջանկութիւնը պահծու գանձ ունենալուն վրայ դրաւ, ըսելով որ մխող մարդը՝ որչափ ալ հարուստ ըլլայ՝ օր մը ուրիշներուն նեղութիւն կու տայ. խոհեմ մարդը իր ապագայ կարօտութեանը համար՝ քիչ մը բան կը պահէ։

Գիտցած եղիր, ով իմ Պոլիոն, որ եօթն ամիսէ՝ի վեր քաւօրեայ ջերմը զիս կը նեղէ. ատոյգ կ'ըսեմ որ հիմայ ալ գրելու առնս ձեռքս կը դողայ, նշան է որ ջերմն պիտոր բռնէ. ուստի թուղթս կը լմընցընեմ. քու ուզածիդ չափ գրեցի, բայց ոչ իմ բաղձացածիս չափ. վասն զի ճշմարիտ բարեկամները իրարու չկրնան ալ ծառայել, սրտերնին՝ որով մէկզմէկ կը սիրեն՝ ուզէ պիտոր ծառայել։ Թէ որ ինծի կը հարցընես որ իմ կարծիքս ինչ է վերի ըսածներուս վրայ, ու այնչափ կարծիքներէն ո՛րը իմ կարծեցս կը մօտենայ, կը պատասխանեմ որ աշխարհքիս վրայ մէկը չկրնար երջանիկ ըլլալ։ Թէ որ երջանկութիւն մը կայ՝ աստուածներուն հետ է։ Ա՛ս խօսքը միայն կ'ըսեմ, ու մնածէ ինչ բաներ ասկէց կ'ուզեմ հետևցընել, մենք ալ աշխարհքիս նեղութիւններուն մէջ, որոնք մեզի երջանկութիւն կը պատրաստեն, կը համարձակինք զմեզ երջանիկ սեպել. բայց երջանիկ ան միայն է, ով որ ձախորդութեանց մէջէն իր խոհեմութեամբը անվնաս կ'ելլէ, ու իմաստութեան երջանկութեան ծայրը կը հասնի։ Չեմ ուզեր, ուզեմ ալ նէ՝ չեմ կրնար աւելի գրել քեզի. մինակ կը խնդրեմ աստուածներէն որ պահպանեն զքեզ ալ զիս ալ՝ դժբաղդութենէ։ Բիւթանիա ըլլալովդ՝ այնչափ հեռու ես մեզմէ, որ քեզի ախորժելի կ'ըլլայ՝ թէ որ Հռոմայ լուրերը գրէի. բայց հիմակուհիմայ ուրիշ նորալուր մը չկայ անկէ՝ի զատ՝ որ կարպանտացիք ու Լուսիտանացիք Սպանիա խիստ մեծ խռովութեան մէջ են։ Գալմատիայէն գիր առի՝ որ բարբարոսները հանդարտ են, թէ և հոն պահպանութեան համար կեցած բանակը ահու դողի մէջ է ժանտախտին համար՝ որ բոլոր ան կողմերը ծաւալեր է։ Ներէ ինծի, Պոլիոնս, այնչափ տկար եմ որ զիս ալ չեմ յիշեր. վասն զի քաւօրեայ ջերմը անանկ անդութ հիւանդութիւն մըն է որ անկէց բռնուողը բանէ մը համ չառներ։ Երկու ընտիր ձիանք կը խրկեմ քեզի, որոնք Սպանիայէն եկան ինծի, երկու ալ ոսկի բաժակ՝ Ալէքսանդրիայէն ինծի բերածներնուն ամենէն աղէկները։ Եթանի՛ թէ կարենայի խրկել քեզի երկու իրիք ժամ այն տաստերկու ժամերէն, որ ջերմն զիս կը տանջէ։ Փաւատինաս քեզի բարև կ'ընէ, իր ու իմ կողմանէս ալ բարև կասիա պառաւ մօրդ՝ աղնիւ որբևարիին։ — Մարկոս ինքնակալ իր ձեռքովը քեզի կը գրէ, ու նորէն կը բարևէ զքեզ, ով Պոլիոն, իր հին բարեկամը։

ՁԱՆԱՊԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԶՈՒԱՐ ՁԻՑԷՐՁԻ ՕՂԼՈՒ ՓԱՀԱՆԱՑԻ

(Տես երես 129, 180, 202, 301։)

Եւ անտի գնացաք Գալիլէա. անդ ընթերցաք զաւետարանն Մատթէոսի «Բայնժամ ճիտուս՝ի Գալիլէա», վերջ՝ «դմա լուսարուք»։ Եւ անտի չուեցաք դէպ՝ի վայր։ Հարցանես, եղբայր, այն ճանապարհն է որ սուրբ աւետարանն կ'ասէ թէ՝ի տուէ՝ի տաճարին ուսուցանէր, և զդիշերն ելեալ ադանէր՝ի լեառն ձիթենեաց, կամ զառ՝ի վայր լերինն ձիթենեաց. աստ կու ժողովեն կանայք թէ մարդիկ չորս քոշէ մանտր

քարեր և բերեն փէղքէլ սուրբ յերու-
սաղէմ սիրելեաց Իւրոց։ Եւ իջանեն
գառ 'ի վայր լերինն Ձիթենեաց՝ տեսա-
նես ողորմութեան դուռն. դէմ սորա է
որ ասաց Եզեկիէլ, թէ փակեալ կաց-
ցէ. կու իջանես, անդ է քարն որ 'ի
ժամ ծաղկազարդին յաւանակն հե-
ծաւ, և անտի գնաս աղօթած տեղն.
նեղ ճամբայ մի է և քովն ցած պատ
մի՝ էյրէթի չարած անդ. համբուրես և
երկրպագութե՛ կ'անես և զինչ խնդիրք
ունիս խնդրես. այն տեղն է որ ասաց
Քրիստոս եթէ հնար իցէ անցո՛ յինէն
զբաժակս զայս։ Դառնաս անտի որ պար-
տէզն է, որ քարընկէց մի հեռի կ'ասէ
աւետարանն, և անդ կայ խոշոր քարեր,
որ առաքեալքն անդ թըմրեալ և քնա-
ցեալ էին յորժամ ասաց Քրիստոս Ար-
թուն կացէք զի մի՛ անկանիցիք 'ի փոր-
ձութիւն, և գնացեալ եմուտ 'ի մաղա-
րայն. այս այն տեղն է որ ցուգա հետ
Հրէից ջահիւք և լապտերօք սուսերօք
և բրօք եկեալ ըմբռնել զանըմբռնելին.
այս տեղս համբուրեաց և ասաց ո՛ղջ
լեր վարդապետ. քանզի նշան տուեալ
էր, ընդ որում ես համբուրեցից զնա
կալարուք. աստ ըմբռնեալ տարան առ
դատաւորն, և կայ աստ սեղաններ որ
ժամ կ'անեն. և ըմբռնած տեղն քար
են դիզեալ, որ ըհատաւորք քարէն վեր
ելանեն և համբուրեն զդիզոյ տեղն.
քանզի մարդ չիհասանիր, զերա ըմբռը-
ման ժամանակին՝ ոտքն գեռանէն երեք
թիզ չափ վերացեր էր. և ունի չորս
սիւն անճոռնի և ոչ տաշած, և հինգ հա-
րիւր հոգի կը սըղմի մէջն. դուրս ելնելն
ունի եօթը ոտք մէրտիվէն. պիտի գը-
նաս սուրբ Աստուածածնի գերեզմանն.
ըմբռման տեղէն մինչև 'ի դուռն սուրբ
Աստուածածնայ երեսուն և չորս ատըմ
է դռնէն վայր իջնելն. քառասունևվեց
ոտք մէրտիւէն է լայնութիւն քսանուեր-
կու ոտք. իջանելն 'ի վայր միջի երկայ-
նութիւնն յիսունուչորս ատըմ է, տաս-
նըչորս ատըմ հոռմի է, որ խորանին
յետոյ է և ունի պատուհան յետոյն
բարձր տեղ լուսամուտ. և աջ կողմն
Ասորոց խորանն է, և 'ի մէջ տեղն սուրբ
Աստուածածնայ գերեզմանն է, որ եր-
կու դուռ ունի և 'ի վերայ գերեզմանին
քսանուերկու կանթեղ կու վառի. մէկ
դռնէն կու մտնեն կու համբուրեն սուրբ
գերեզմանն, և միւս դռնէն կ'ելանեն
դուրս։ Եւ կայ սորայ կից սեղան մի
այլ դրսի կողմն. որ այլում օր թէ պա-
տահի՝ անդ մատուցանեն զպատարագն.
ապա գերեզմանին վերայ հանապազ
չորեքշաբթի լինի մեզ Հայոց ազգիս. և
'ի վեր ելանելն ալ կողմն մէրտիվէնին
կէսնեղովսէփայ Ձ֊ահօրն գերեզմանն է,
և ձախ կողմն ցովակիմայ և Աննայի գե-
րեզմանն է ծնողաց սուրբ Ձ֊ածծնի. և ե-
լանես արտաքս, նստեալ անդ հալվըճին
արաքն՝ կու ձայնէ ասելով. Ֆահիր ֆռ-
խարէ մխսի խաս հալխայ. եանի, ա-
ռէք աղքատաց բաշխեցէք։ Կայ անդ
մէյտան մի այն գաւիթն 'ի վայր դէպ
'ի մէրտիւէնին. այնչափ անձրև եկաւ
որ վարն մինչև երեք ոտք մէրտիվէնին
ծածկեալ, որ չորեքշաբթի աւուր մի
կամեցանք գնալ թէ պատարագն անդ
կու լինի որպէս սովորութիւն է. գնա-
ցեալ փոքր լուսարարն և տեսեալ որ
դապիլ չէ գնալն, ժողովեալ ուխտա-
ւորաց քսան հոգի կարճ՝ կիւկիւմ-
ներ և խոշոր պարխաձներ մինչ երեք
օր տիժար թէ գլուրն հատուցին. և այս
գնացողներուն վանից զիաֆէթ արին։
Եւ անտի ելանես 'ի դուրս, կայ սորայ
դիմաց զէթունի ծառ մի ահագին, որ
զբազն ոտիւք չափեցի՝ քառասուն ոտք
էր։ Եթէ կամիս քաղաքէն երթաս դէպ
'ի Ստեփանոսի քարկոծած տեղն. կու
համբուրես. աւռ ընտի եօխուշն ձեռք.
չորս չորս մարդ կամ թէ հինգ հինգ
մարդ գրուց տալով մինչև 'ի դուռն
քաղաքին ուր արևելեան կողմն է. ո-
ղորմութեան դուռն որ ընդդէմ համ-
բարձմանն Քրիստոսի, զոր քառասնօ-
րեայ գալստեանն 'ի տաճարին իւրմէն
բացվաւ. զոր եզեկիէլ մարգարէն փա-
կեալ էր չորս հարիւր տարով առաջ. որ
և միւս դուռն որ ըհատաւորք կամին թէ
քաղաքէն երթան, բենիամինի դուռ
կոչի, ընդ որ եմուտ Քրիստոս յորժամ
եկն աւանակաւ 'ի քաղաքն յերուսա-

ղէմ, դռնէն ներս մտնելն ալ կողմն ճը-
կիս, անդ կայ բաղանիս մի սուրբ Աս-
տուածածնայ բաղանիս անուանի, և
կայ մէկ ղուռնայի մէջն սուրբ Աստուա-
ծածնայ կըրօնկին տեղն նշան տեստ-
ղաց. մէկ քիչ յառաջ գնաս տունն
Յովակիմայ և Աննայի ծնողաց սուրբ
Աստուածածնի՝ որ է փառաւոր տաճար.
անդ մտաք ՚ի վայր աղօթած տեղն,
և անդ է ծառն դաբնիդեայ. և ելանես
վեր երեսունուվեց ոտք մէրտիվէն և
բարձր օտայ մի, և ունի փէնճէրէ. և անդ
նստէր Աննա դէպ ՚ի տաճարն նայէր. և
դուրան մեծ ահագին տեղ ժամանակաւ
վճարեն եղեր և այժմ ոչ կարեն. ունի
մեծ դուռ մի, անդ կանգնի պահապանն
մինչև որ փարան չառնէ և ոչ թողու
ներս գնաս: Եւ մերձ նորին հինգ սրահ
Պրոպատիկէ աւազանն, որ երեսունև-
ութամեայ անդամալոյծն անդ բժշկեաց
Քրիստոս բանիւ իւրով: Անտի մէկ քիչ
յառաջ դուռն Գեղեցիկ տաճարին ուր
Պետրոս և Յովհաննէս բժշկեցին զկաղն
բանիւ. և անդ կայ տափակ քար մի որ
անդամալոյծն անդ նստեալ և վիճեալ
ընդ Քրիստոսի. ընդդէմ սորա պա-
տի մէջ (տէօրդ) քօշէ ծակ մի, որ ան-
դամալոյծին տուեալ փողն անդ լնոյր:
Եւ անտի ապարան Հերովդէի, ուր ըս-
պիտակ հանդերձ զգեցուցին Քրիստո-
սի, և տեղին՝ ուր զփուշ պսակն եդին
՚ի գլուխն Քրիստոսի: Եւ անտի տունն
տեառատես կնոջն, յորժամ անցանէր
Քրիստոս ասաց ՚ի մուխ իւրում թէ մի-
այն մերձենամ ՚ի հանդերձս նորա փըր-
կիմ. և յորժամ մերձեցաւ փրկեցաւ.
և ասէ Յիսուս, ո՞ մերձեցաւ յիս, և ասեն
առաքեալքն, տէր, քանզի ժողովուրդն
նեղեն զմեզ. և ասէ Յիսուս. քանզի զօ-
րութիւն ել յինէն. և յորժամ լուաւ
կինն անկեալ յոտս նորա և երկիր պա-
դանէր. և ասէ Յիսուս. կին դու մեծ են
հաւատք քո, երթ ՚ի խաղաղութիւն: Եւ
մերձ նորին կամար, յորոյ վերայ քա-
րողեաց Քրիստոս. և երկու քարինք ըս-
պիտակացան. և տունն Պիղատոսի որ
մեծ սարայ է. անդ կայ ձի կապելու
տեղ: Եւ մեք գնացաք հանդերձ հաճի
Սուքիասով, ուստ արաք որ զՔրիս-
տոս անդ սակաւ մի բանդն են եղեալ,
որ Ֆռանկք ուստ կ՚երթան, և տարին
մէկ հեղ ժամ կ՚անեն ըստակի զօռով:
Տես զզօրութիւն, որչափ ձի որ կա-
պեն՝ չի ապրիր. այժմուս կու վախեն
ձի կապելու. յետոյ հանեալ դատա-
պարտեցին: Եւ տեղին քարայատակ
ուր նստաւ Պիղատոս և լուաց զձեռան
ասելով, ես անպարտ եմ յարենէ դորայ.
և Քրիստոս գան հարեալ ետ ՚ի ձեռս
Հրէից: Եւ անտի յառաջ տեղին ուր
զՍիմոն կիւրենացին կալան պահակ
խաչին Քրիստոսի. կայ աստ բաղանիս
մի, և կայ պատատակն սոմախի սիւն մի
պառկած. և ՚ի գլխոյ սեանն տափակ
քար մի. երկայնութիւնն վեց թիզ և
լայնութիւնն չորս թիզ. հոն հանգէր
Քրիստոս. Սիմոն կիւրենացին պարտի-
զէն գալն լքէն՝ անդ ըմբռնեալ հը-
րէայքն և բարձեալ զխաչն. այն բաղա-
նիսն եթէ կամիս հարցանել, որ Աղա-
ւաչ[1] եմուտ ուր և ծեծ կերաւ թաստով,
որ այժմ փաշա-հաւատի կու անուանեն:
Եւ մէկ քիչ առաջ կու գաս որ եօխուշ
է, մէկ քիչ կու նմանի Ըստամպօլու
սօխանին. վերի կողմն կայ սապոնղա-
նա մի, որ տիրոջն մականունն Շիկիմի-
չի է, և սօրայ քովն տուն մի որ այժմու
ղարապայ է. այն ժամանակին կայր այն
տունն հրէայ մի որ հիւանդացեալ էր,
և ուղարկեալ զաղախինն իւր ՚ի չուկան
բան ինչ առնելոյ և պատահեալ որ
Քրիստոս տանէին ՚ի Գողգոթա ՚ի խաչ
հանել. և ետես աղախինն զի խոնճե-
ցեալ էր և քրտունքն ընդ հետ արեան
ոլոռն ոլոռն հեղոյր երեսացն Քրիստո-
սի, և սա զմէնտիլն հանեալ զՔրիս-
տոսի քրտինքն սրբեալ, իսկոյն պատ-
կերքն Քրիստոսի նկարեալ ՚ի վերայ
մէնտիլին. և աղախինս այս յամե-
ցաւ. և յորժամ գնացեալ ՚ի տունն
հիւանդն այն բարկացեալ թէ այս ինչ
ատեն է որ գնացեալ ես, և նա պատ-
մեալ նմա թէ այս ինչ բանի պատահե-
ցայ, որ Յիսուս Նազովրեցին բարձեալ

1 Սիմոն աղուաշ Ճգնաւորն:

զհաչ իւր տանէին ծեծելով և կառափ տելով, և քրտունքն երեսէն խառն ընդ արեան վազեալ, և ես խղճացի զնա և քրտունքն յերեսաց սրբեցի, զի այն յամեցայ. և խեղճ հիւանդն այն սկսաւ անարգել և նզովել, և աղախինն ցոյց ետ զմանտիլն, և նա կրկին հայհոյեաց. և ասաց թէ լուա զդա. և աղախինն լըւաց և ոչ ել նկարեալ պատկերն փըրկչին. նա պառկած տեղացն ստիպէր թէ տաք ջուրով լուա զդա. և աղախինն եռացոյց զջուրն և լուաց կրկին և երեքին անգամ. նա այլ գերագոյն երևիւր 'ի վերայ մէնտիլին. և զարմացան թէ այս ինչ հրաշք է. և ծագեաց նոյն կէտն չնորհքն աստուածային 'ի վերայ հրէին այն. և ասաց թէ բեր զդա և արկ 'ի վերայ իմ. և յորժամ տարեալ աղախինն և ձգեաց 'ի վերայ հիւանդին և առժամայն բժշկեցաւ, և վաղվաղակի ելեալ գնաց զկնի նորա տեսանել թէ զինչ առնիցեն ցիսուսի: Եւ անտի գնաս 'ի մութ չուկան, որ երկու կողմն քէմերներ է, որ անտի անցուցանէին. և անդ ծեծեցին զտախտակն, թէ այս է սուտ մարգարէ, եկայք տեսէք զդա. այն տեղն անիծեց որ աւեր մնաց. եթէ կամենան չինել՝ առաւօտն վիրան կու գտնեն. ա նոր համար մարդ բան կարող չէ չինելու. այսչափ նախատինք արարին Քրիստոսի, և սուրբ Աստուածածին դեռևս ոչ գիտէր. ազգ արաւ աւետարանիչն ցոհաննէս. և այս տեղս հանդիպեցաւ միածնի որդւոյ իւրոյ, և այն վերոյդրեալ տեղն սուրբ Աստուածածին անէծ, և Մարիամանք զհետ նորա:

Եւ անտի թաղախանան գնալն սուրբ Ստեփանոսի եկեղեցին, որ այժմուս բանդ են արարեալ. զպարտականքն թող կու տան ներս և ոչ կարէ ելանել. քանզի դուռն փակ և բանալի չունի. այսպէս սահման մի եղեալ են. եթէ դայ պարտատէրն հանէ՝ կու ելանէ, և եթէ ոչ՝ կու մնայ ներսն: Սորա քովերն թաղախաներ է. անդ կայ փոքրիկ դուռ մի, ապա տարին զնա սիւնն կապեցին կամ Գողգոթա 'ի խաչ հանելոյ:

Կը շարունակուի:

ՄԱԴԼՈՑ ՅԱՂԴՈՆՔ

Բորդոյ—Վէգքիոյէն ելլալով և երթալով հիւսիսային արևմտեան կողմը, դէպ 'ի կղզւոյն խորերը, չուտով մը գետինը կը սկսի բարձրանալ, և երեք ժամուան միջոց ծամածռուած ճամբաներէ քալելէ ետքը, (զորոնք կը խափանեն խոշոր ժայռերու կտորուանք և երբեմն կը կտրեն խոխոմներ,) ընդարձակ վանքի մը եղերքը կ'ելլեցուի: Մաքին կորսիկացի հովուին և դատաւորաց հետ աւրուողներուն հայրենիքն է: Գիտնալու է որ կորսիկացի մշակը արտը աղբով պարարտացնելու աշխատութենէն ազատելու համար, կրակ կու տայ անտառի մը մէկ մասին. թող կըրակը թէ որ կ'ուզէ պէտք եղածէն աւելի տարածուի. ինչ որ ալ ըլլայ, երկրագործը ապահով է որ առատ բերք պիտի վաստըկի ծառերու մոխրովը բեղնաւորած հողին վրայ ցանելով իրեն սերմանիքը: Հասկերը կտրելէն ետքը, վասն զի խոզանը ժողվելը դժուար ըլլալուն համար անանկ կը ձգեն, հողուն մէջ մնացած արմատներն այրած չըլլալով կը ծլին հետևեալ գարնան թանձրախիտ ուռճաւորութեամբ, և քանի մը տարիէն եօթը կամ ութ ոտք բարձրութեան կը հասնին: Այս տեսակ անտառն է մաքի ըսուածը, ուր կը տեսնուին այլ և այլ տեսակ ծառեր և թուփեր, իրարու հետ խառնուած չաղուած ինչպէս որ բախտը կը բերէ: Անկարելի է որ մարդ առանց մէկ ձեռքը կացին ունենալու ճամբայ բանայ հոնտեղ, և անանկ խիտ և տերևալից մաքիներ կը գտնուին որ նոյն իսկ վայրի ոչխարները չեն կրնար մտնալ:

Թէ որ մարդ մը ապաննած ես, Բորդոյ—Վէգքիոյի մաքին գնա, և հոն ապահով կ'ապրիս, աղեկ հրացանի մը, վառօդի և գնտակներու հետ. մի մոռնար առնելու նաև կնգղաւոր մթկեկ վերարկու մը որ վերմակի և անկողնոյ տեղ կը ծառայէ: Հովիւները քեզի